


ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՉ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝  Ֆ. Կարապետյան
Արթիկի պետական քոլեջի կառավարման
խորհրդի նախագահ
« ____ » _____ 2021թ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ

ԱՐԹԻԿ 2021թ.

Ընդհանուր դրույթներ

1.1. Գրադարանը ԱՊՔ-ի ստորաբաժանումներից է: Այն գիտական, ուսումնասովանողական և մշակութային – լուսավորական ստորաբաժանում է, գիտելիքների տարածման, պահ- պանության, հոգևոր և մտավոր շփման մշակութային կենտրոն: Գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, ԱՊՔ-ի գործող կանոնադրության և սույն կանոնակարգի հիման վրա:

1.2. Սույն կանոնակարգը սահմանում է գրադարանի կարգավիճակը:

1.3. ԱՊՔ-ի գրադարանի կանոնակարգը հաստատվում է կառավարման խորհրդի կողմից:

Հիմնական խնդիրներն ու գործառույթները

Գրադարանի հիմնական խնդիրներն են.

2.1. ԱՊՔ-ի ընթերցողական համակազմի գրական – տեղեկատվական սպասարկում՝ արդի գրադարանավարության և մասնագիտական պահանջների չափանիշներով:

2.2. Գրադարանային ֆոնդերի (գրականություն, մամուլ, էլեկտրոնային գրադարան) շարունակական ձևավորում և համալրում՝ մասնագիտական ուսումնական գործընթացներին համապատասխան:

2.3. Տեղեկատվական – մատենագիտական ցանկերի կազմակերպում՝ տեղեկատվության ժամանակակից ձևերի մեթոդների ներդրմամբ:

2.4. Գրադարանային ծառայությունների շրջանակների ընդարձակում:

2.5. Համագործակցություն ՀՀ տարածքային և մարզային գրադարանների հետ:

Գրադարանի գործառույթներն են՝

3.1. ԱՊՔ –ի գրադարանում միավորի գրանցում, վերագրանցում, ինչը ընթերցողին իրավունք և հնարավորություն է տալիս օգտվելու գրադարանի տացքակետից, առարկայական կաբինետներից՝ սպասարկման ձևով:

3.2. Գրականության շերտավորված սպասարկում՝ ընթերցող- արձնենտների կազմին և պահանջարկին, ինչպես նաև գրադարանի առանձին բաժինների

ուղղվածությանը համապատասխան՝ շերտավորված, կաբինետներում, անհատական, խմբակային, բաց դարակային:

3.3. Տեղեկատու- մատենագիտական սպասարկում

3.4. Նոր ստացած գրականության ցուցադրում, մատենագիտական ցանկերի, քարտարանների համալրում, միջոցառումների նախապատրաստում, անցկացում:

3.5. Անմիջական օգնություն ընթերցողին՝ գրականություն որոնելու, ընտրելու, տեղեկատու ապարատից օգտվելու, նորույթներին իրազեկ դառնալու գործընթացներում:

3.6. Գրադարանային ֆոնդերի ձևավորում և նպատակաուղղված համալրում՝ քոլեջում գործող ուսումնական պլաններին, ծրագրերին համապատասխան:

3.7. Ֆոնդերի ուսումնասիրություն, վերադասավորում, քայքայված, արդիականությունը կորցրած գրադարանային միավորի գտում, օտարում:

3.8. Ֆոնդի պարբերական վերլուծություն՝ ամբիոնների մասնակցությամբ, ուսումնական և գիտական գրականությամբ ապահովվածություն, վերահրատարակման ենթակա գրականության ընտրություն:

3.9. Ֆոնդերի տեղաբաշխման, պահպանման ռեժիմի իրականացում, գրականության վերականգնողական (կազմում - պատճենահանում) աշխատանքների կազմակերպում:

3.10. Ֆոնդերի բովանդակության մատենագիտական արտացոլում գրադարանային ավանդական գրացուցակների, քարտարանների միջոցով:

3.11. Ֆոնդերից ամբիոններին, կաբինետներին հանձնված գրականության առկայության ստուգումներ:

3.12. Գրադարանի աշխատակցի(ների) մասնագիտական որակավորման բարձրացում, մասնակցություն մարզում, հանրապետությունում կազմակերպվող որակավորման բարձրացում միջոցառումներին (դասընթացներ, կոնֆերանսներ, սեմինարներ) փորձի փոխանակման նպատակով գործուղումներ:

Կառուցվածքն ու գործառույթները

4. ԱՊՔ-ի գրադարանը իրականացնում է հետևյալ գործառույթները.
 - 4.1. Համալրում, կոմպլեկտավորում
 - 4.1.1. Գրացուցակավորում
 - 4.1.2. Դասակարգում և առարկայավորում
 - 4.1.3. Նոր ստացած գրականության մուտքագրում
 - 4.1.4. Քարտարանների պահպանում և թարմացում
 - 4.2. Գրապահոց
 - 4.2.1. Գրականության պահպանում
 - 4.2.2. Գրականության հիգիենայի պահպանում
 - 4.2.3. Նոր գրականության դարակավորում
 - 4.3. Արձնենտային բաժին
 - 4.3. 1. Ուսանողության և աշխատակազմի հաճախելիության ամենամյա հաշվետվություն
 - 4.4. Հնատիպ գրականության պահպանություն և սպասարկում
 - 4.4.1. Տեղեկատվական տարբեր միջոցների կիրառմամբ նոր ստացած գրականության լուսաբանում
 - 4.5. Ուսանողության համակարգչային սպասարկում

Այլ գործառույթներ

Գրադարանը անմիջականորեն ենթարկվում է ԱՊՔ-Ի տնօրենին, գրադարանը հաստիքավորումը հաստատում և փոփոխում է տնօրենը: Գրադարանի աշխատողը (ները) պատասխանատու է գրքային ֆոնդերի պահպանման համար՝ գործող օրենքի շրջանակներում:

Արթիկի պետական քոլեջի տնօրեն



[Handwritten signature] Ա.

Ղուլիջողյան